ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱ-ՀՌՈՄԷԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐԻ Ք.Ա. 190-Ք.Ե.428 ԹԹ. (ՊԱՏՄԱ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ)

ՅԱԿՈԲ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Մեծ Հայքի պետականութեան պատմութեան ուսումնասիրութեան խնդրում առանձնապէս կարեւոր նշանակութիւն ունի սահմանային խնդիրների վերլուծութիւնը։ Սահմանն հանդիսանում է այն կարեւոր չափորոշիչներից մէկը, որի ներսում ձեւաւորւում եւ իր կենսակերպն ու պատմութիւնն, իսկ ապագայում նաեւ պետականութիւնն է կերտում ժողովուրդներից իւրաքանչիւրը։ Այս տեսանկիւնից խիստ կարեւոր է պարզաբանել եւ ցոյց տալ, թէ ինչպիսի՞ պետական սահմանների առկայութեան պայմաններում է իր գոյութիւնն ու կենսակերպն ապահովել հայ ժողովուրդն իր պատմութեան երկարատեւ դարերի ընթացքում։

Քանի որ խօսքը վերաբերում է Մեծ Հայքի թագաւորութեանը, ապա այն անմիջականօրէն առնչւում է Արտաշէս Ա.ի անուան եւ գործունէութեան հետ, քանզի հայ բազմաթիւ արքաներից նա առաջինն էր, որ կարողացաւ մէկ պետականութեան սահմաններում վերամիաւորել հին հայկական 15 նահանգներից՝ 14ը, Ծոփքից բացի, որն ընդգրկուեց այդ պետականութեան տարածքների մէջ մի փոքր աւելի ուշ՝ Ք.ա. 94ին, Տիգրան Բ. Մեծի կողմից։ Մերօրեայ անկախ պետականութեան՝ Հայաստանի Հանրապետութեան համար առանձնապէս կարեւոր եւ այժմէական է ոչ միայն սահմանային տարակարծութիւնների խնդրի կարգաւորումը արեւելեան եւ արեւմտեան հարեւանների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի հանրապետութիւնների, այլեւ հիւսիսում գտնուող Վրաստանի Հանրապետութեան հետ։ Այսպիսի բովանդակութեան յօդուածի շարադրումն ունի իր որոշակի շարժառիթներն, քանի որ ներկայիս (չնայած այդպէս էր նաեւ նախկինում՝ խորհրդային իշխանութեան տարիներին) վրացական պատմագիտութիւնն համարեա առանց բացառութեան ունի սուր հակահայկական ուղղուածութիւն։ Նրանց կողմից անհիմն տարածքային յաւակնութիւններ են ներկայացւում հայերին, որն ի վերջոյ կանխարգելման եւ հակառակն ապացուցելու կարիք է զգում։

Մեծ Հայքի Թագաւորութեան հիւսիսային, իսկ մասնաւորաբար հայ-վրացական սահմանային հարցերին անդրադարձել են Հայնրիխ Հիւբշմանը, Եոզէֆ Մարկուարտը, Հայր Ղուկաս Ինճիճեանը, Հայր Ղեւոնդ Ալիշանը, Նիկողայոս Ադոնցը, Յակոբ Մանանդեանը, Սուրէն Տ. Երեմեանը, Թադէոս Յակոբեանը, Ռոպերթ Հ. Հիւսնը եւ այլոք[1]։ Այսպիսի մեծանուն ուսումնասիրողների անունների թուարկումն ունի մէկ հիմնական նպատակ,

որպէսզի ցոյց տրուի, որ հարցի ուսումնասիրութիւնը չի գտնւում մեռեալ կէտի վրայ, այլ արդէն կատարուել է բաւականին կարեւոր եւ հիմնարար աշխատանք վրաց պատմաբանների հակագիտական եւ ենթակայական վարկածները ժխտելու համար։ Հարցի մեխն այն է, որ ոչ միայն հայ, այլեւ օտարալեզու, այդ թւում եւ վրաց մատենագիրներն բաւականին առարկայական եւ անաչառ վկայութիւններ են հաղորդում հայ-վրացական սահմանի վերաբերեալ, որոնք օգտագործելուց յետոյ նոյն այդ վրացի ուսումնասիրողներն մոռանալով իրենց նախկին կարծիքը՝ խօսում են սահմանների վերաձեւման ու տարածքային պահանջների մասին։ Ուստի յօդուածում առաւել նպատակայարմար ենք գտնում անդրադառնալ ոչ միայն որոշակի հայ-վրացական, այլեւ Մեծ Հայքի Թագաւորութեան ողջ հիւսիսային սահմաններին, սկսած հիւսիս-արեւելքից մինչեւ հիւսիս-արեւմուտք։

Բ. դարի սկզբներին (Արտաշէս Ա.ի օրօք՝ Ք.ա. 189-160) տեղի ունեցած հայ-վրացական պատերազմի աւարտից յետոյ, որի մասին վկայում են մատենագիրները[2]*, այլեւս սահմանային արմատական փոփոխութիւններ Մեծ Հայքի հիւսիսում՝ Հայաստանի եւ հարեւան Վիրքի եւ Աղուանքի միջեւ համարեա տեղի չունեցան։ Ելնելով այս հանգամանքից համառօտակի կանգ առնենք այն հարցին, թէ ինչպիսի տեսք ունէր այդ սահմանագիծը։ Մեծ Հայքի ծայր արեւելքում Փայտակարան նահանգն էր, որը գտնւում էր արեւելեան լայնութեան 38-40°ի միջեւ ընկած տարածքում եւ յարում էր Կասպից Ծովի արեւմտեան ափերին։ Եթէ աւելի որոշակիացնենք այս տեղադրութիւնը, ապա այդ նահանգը ձգւում էր Կուրի գետաբերանից՝ Հրաքոտ-Պերոժ գաւառից մինչեւ Որմիզդ-Պերոժ, որոնց միջեւ տեղակայուած էին հիւսիսից-հարաւ՝ Ռոտ-ի-Բաղա, Հանի եւ Ամշի Բագաւան գաւառները։ Այստեղ վիճելի է միայն Հանի գաւառի խնդիրը, որի եղելութիւնն ընդունում է Երեմեանը, բայց լիովին բացառում է Յակոբեանը։ Ինչ վերաբերում է Բաբկէն Յ. Յարութիւնեանին, ապա վերջինս հարցականի տակ է դնում նրա լինելիութիւնը*[3]*։ Այս տեղանուան մասին երկիցս յիշատակում է Մովսէս Խորենացին, որոնցից առաջինում նա նշում է, որ այստեղից էր ծննդով հայ պատմութեան նշանաւոր երեւելիներից մէկը՝ Ողիմպ քուրմը, որը գրել է Մեհենական Պատմութիւն աշխատութիւնը*[4]*։ Առաւել կասկածելի է երկրորդ վկայութիւնը։ Նա նշում է, որ հայ երեք նախարարներ՝ Սուրէն Խոռխոռունին, Վահան Առաւեղեանը եւ Աշխադար Դիմաքսեանը, ցանկացել են խլել Արշակ Գ. արքայից՝ Դարանաղեաց գաւառի՝ Անի ամրոցում թաքցրած գանձերը։ Նրանց նպատակն է հանդիսացել այդ գանձերն յանձնել Արեւելահայաստանում իշխող՝ սասանեանների դրածոյ Խոսրով Գ.ին, բայց այդ մտայղացումը մատնուել է անյաջողութեան*[5]*։ Այստեղ մեզ հետաքրքրողը ոչ թէ գանձերի ճակատագիրն է, այլ խնդրի լուսաբանումը՝ պատմա-աշխարհագրական տեսանկիւնից։ Միանգամայն պարզ է եւ առաւել եւս հասկանալի, որ ոչինչ ընդհանուր չէր կարող լինել եւ, որ խօսքը վերաբերում է Մեծ Հայքի երկու հակադիր բեւեռներում գտնուող աշխարհագրական տեղանուններին։ Դարանաղեաց Անիի ամրոցի մասին երկու վկայութիւններ ունի նաեւ Բուզանդը եւ վերջինս այն տեղադրում է Դարանաղիի՝*

Եկեղեաց գաւառում, որը Բարձր Հայք նահանգի կազմում էր[6]*։ Հայ երկու հանրայայտ պատմիչների այս վկայութիւնների համադրութիւնից պէտք է եզրակացնել, որ, եթէ Խորենացու մօտ կայ սխալ կամ անճշտութիւն, ապա դրա մեղաւորը ոչ թէ ինքն է, այլ դա յետագայում նրա Պատմութիւն Հայոց ձեռագիրն արտագրողների սխալի եւ անփութութեան արդիւնքն է։ Վերեւում մենք միտումնաւոր չնշեցինք եւ չրջանցեցինք նշանաւոր հետազօտող Գագիկ Խ. Սարգսեանի անունը, որը եւս զբաղուել է այս հարցով, յատկապէս պատմա-անուանակոչութեան տեսանկիւնից՝ քննութեան ենթարկելով Ողիմպ անունը։ Նա գտնում է, որ այն յունական* Olumpios-Ὀλύμπιος*ի*[7] *հայկականացուած տարատեսակն է եւ, որ նրա Մեհենական Պատմութիւնը պէտք է գրուէր հելլենիզմի ազդեցութիւնը մեծապէս կրած Դարանաղեաց Անիի՝ Արամազդին պատկանող տաճարում։ Մենք լիովին կիսում ենք այս տեսակէտը եւ կարծում, որ Հանին նոյն Դարանաղեաց Անին է։ Պէտք է աւելացնել նաեւ, որ հայերէնում իրար բաւականին մօտ են ար-եւ-ելք եւ ար-եւ-մուտք բառերը (առաջին երկու վանկերն իրարից բնաւ չեն տարբերւում), ուստի եւ, չպէտք է բացառել ձեռագիրն արտագրողների կողմից զուտ պատահական, եւ ոչ թէ միտումնաւոր շփոթմունքը այս խնդրում։ Այսպիսով, Սարգսեանը յարում է Յակոբեանի տեսակէտին, որին կողմնակից ենք նաեւ մենք։*

Կրկին վերադառնանք Հանիին։ Ըստ Երեմեանի, Յակոբեանի եւ Յարութիւնեանի՝ Փայտակարան նահանգի կազմում գոյութիւն ունեցած գաւառների թուաքանակը եղել է տասներկու։ Փայտակարանի կապակցութեամբ Երեմեանը գրում է. «Մեծ Հայքի այս ծայրամասային երկիրը, որ նուաճուել է Արտաշէս Ա.ի ժամանակ, համարւում էր Փայտակարան քաղաքի քաղաքային տերիտորիան»[8]*։ Փայտակարան նահանգի հիւսիս-արեւելքում սահմանագիծ է հանդիսացել Կուրը, որն իրարից անջատել է Մեծ Հայքն ու Աղուանից թագաւորութիւնը։ Այստեղ է գտնուել Աշխարհացոյցեան Ուտիք նահանգը, իսկ Արտաշէս Ա.ի օրօք նրա ողջ արեւմտեան հատուածը յայտնի է եղել Շակաշէնէ անուամբ։ Վերջինիս կապակցութեամբ Ստրաբոնն ունի երեք յիշատակութիւններ, որոնցից հարցի մեզ հետաքրքրող տեսանկիւնից առանձնապէս անգնահատելի է վերջինը։ Նա վկայում է.* «Հայաստանի ներսում կան շատ լեռներ եւ շատ լեռնադաշտեր, որոնց մէջ խաղողի այգին հեշտութեամբ չի աճում, նաեւ շատ հովիտներ, ոմանք չափաւոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպէս Արաքսենէի դաշտը, որով Արաքս գետն է հոսում՝ մինչեւ Աղուանքի ծայրը, եւ թափւում է Կասպից Ծովը, եւ սրա հետ Շակաշէնը՝ սահմանակից Աղուանքին եւ Կուր գետին, յետոյ Գուգարքը..»[9]*։ Շակաշէնն անջատուել է միայն աւելի ուշ, վերածուելով գաւառի ու լինելով թուով եօթերորդը եւ գտնուելով Ուտի Առանձնակ եւ Գարդման գաւառների միջեւ։ Ստրաբոնեան դարաշրջանում այն ընդգրկել է ոչ միայն այսպէս կոչուած Աշխարհացոյցեան Շակաշէնը, այլեւ Գարդմանը եւ նրանից արեւմուտք ընկած Տուչ Կատակ եւ Աղուէ գաւառները, մինչեւ՝ Գուգարքի արեւելեան սահմանները*[10]*։ Փաստօրէն Կուրը արգելապատնէշ է հանդիսացել եւ նպաստել, որպէսզի Երուանդունի թագաւորների գա-*

հակալութեան ժամանակներից սկսած, ոչ մի հակառակորդ չկարողանայ ներխուժել եւ ներթափանցել Մեծ Հայքի տարածքը, իսկ առաւել եւս հաստատել այստեղ իր գերիշխանութիւնն ու տիրապետութիւնը։

Վերոյիշեալ տարածքներից արեւմուտք Գուգարք երկրամասն է, որը, ինչպէս տեսանք վերեւում, նախապէս եղել էր հայոց պետականութեան կազմում, իսկ յետագայում, Երուանդունիների օրօք, անյայտ հանգամանքների բերումով, բայց շատ կարճատեւ ժամանակով՝ ընկել էր հարեւան Վիրքի տիրապետութեան տակ։ Դեռ ուրարտական ժամանակաշրջանից այս վարչա-տարածքային միաւորը յայտնի է եղել Զաբախա անուամբ (KUR Zabaha), այսինքն՝ գտնուել է հայոց պետականութեան կազմում դեռ ուրարտական շրջանից, իսկ յետագայում, այն վերստացել է Զաւախք անուանումը՝ գտնուելով Գուգարքի կազմում։ Ինչպէս մատնացոյց է անում Ն. Վ. Յարութիւնեանը, այն միացուել է Ուրարտուի հայոց պետականութեանը դեռ Արգիշտի Ա.ի օրօք եւ գտնուելիս է եղել, ընականաբար Էթիունի (KUR Etiuni-Etiuhi) վարչա-տարածքային միաւորից հիւսիս[11]։ Ինչ վերաբերում է Էթիունի վարչա-տարածքային միաւորին, ապա այն հիւսիսում սահմանակից էր Զաբախա երկրին, իսկ հարաւում՝ Ազային։ Արեւելքում այն տարածւում էր մինչեւ Սեւանի արեւմտեան ափը, իսկ արեւմուտքում՝ Ախուրիանիի տարածքը (URU Ahuriani)[12]։ Էթիունիից արեւմուտք տարածւում էր Դիաուխի երկիրը (Տայքը), իսկ հարաւ-արեւմուտքում՝ Տաւարածների հովիտն էր։ Էթիունին, փաստօրէն Ազա երկրի հետ միասին ընդգրկում էր Աշխարհացոյցեան Այրարատի հիւսիսային կէսը, որն էլ յետագայում դարձաւ բնօրրան հայ ժողովրդի ողջ պատմութեան ընթացքում[13]։ Երեմեանն իր երկու, բայց տարբեր ժամանակներում հրատարակած նոյնանուն քարտէզներում՝ Մեծ Հայքը Ըստ «Աշխարհացոյց»-ի եւ Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»-ի, Գուգարք նահանգին տալիս է երկու տարբեր սահմաններ[14]։ Առաջին քարտէզում, Գուգարքն Ուտիքից անջատուած է Գարդման եւ Մեծ Կուենք գաւառներով, որոնք Ուտիքի կազմում են, իսկ Գուգարքի կազմում ընդգրկուած են Բողնոփոր, Քուիշափոր, Զորոփոր, Ծոբոփոր գաւառները։ Երեմեանը սահմանագիծ է անցկացնում նաեւ Գուգարքի կազմում ընդգրկուած Բողնոփոր, Քուիշափոր, Խանցիխէ, Պարուար եւ Մանգլեաց Փոր գաւառների եւ մնացեալ տարածքների միջեւ, որոնք գտնուելով Գուգարքի կազմում, ըստ նրա 338-363ին անջատուած են եղել Մեծ Հայքից։ Հեղինակը նկատի է ունեցել այն հանգամանքը, որ երբ 360ականների վերջերից՝ Արշակ Բ.ի եւ Պապի գահակալութիւնների միջեւ ընկած ժամանակահատուածում, երկրի տարբեր մասերում բռնկւում էին ապստամբութիւններ, Գուգարքը նոյնպէս ժամանակաւորապէս անջատուել է Մեծ Հայքից։ Բայց, ինչպէս վկայում է Փաւստոսը, դրանք «արմատախիլ» արուեցին սպարապետ Մուշեղ Մամիկոնեանի կողմից՝ Պապի իշխանութեան հենց ամենասկզբին (368-370)։ Այդ խռովութիւններն ընդգրկել էին Հայաստանի համարեա բոլոր ծայրամասերը եւ հիւսիսում տեղի ունեցած իրադարձութիւնների վերաբերեալ Փաւստոսը վկայում է. «Յաղագս Վրաց» գլխում, ուր նշւում է, որ միւսների նման պատժուել է նաեւ Գու-

գարաց բդեշխը, եւ իր շարադրանքն աւարտում է այսպէս. «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց եւ ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնու հետեւ յինքն վտարեալ՝ դառնայր անտի»[15]: *Իր երկրորդ քարտէզում Երեմեանը, Մանգլեաց Փոր, Պարուար, Բողնոփոր, Քուիշափոր գաւառներն առանձնացնելով անուանում է* «Գուգարաց բդեշխութեան կազմում մտնող տարածքը մինչեւ 363թ.»[16]:

Մեծ Հայքի սահմանը Կուրով աւարտւում էր Հնարակերտի մօտ, որն յայտնի էր որպէս ոչ միայն քաղաք-ամրոց, այլեւ որպէս ճանապարհների խաչմերուկ, քանզի այստեղով է անցել Պարտաւ-Մծխեթա-Սեբաստուպոլիս (Փասիս) ճանապարհը, որը տանում է մինչեւ Ալանաց Դուռն ընկած ուղին: Հնարակերտի մասին երկիցս յիշատակուած է Բագրատունեաց Հայաստանի ժամանակին վերաբերող աղբիւրներում, որպէս կարեւոր նշանակութիւն ունեցող առեւտրական հանգոյցի: Այն գտնուել է ինչպէս Պարտաւ-Մծխեթա, այնպէս էլ Դուին-Մծխեթա ճանապարհների վրայ, որը կրկին անգամ վկայում է նրա կարեւոր դիրքի մասին[17]: *Այն գտնուել է Աղուէ եւ Զորոփոր գաւառների միջեւ, որի հիւսիսում հայ-աղուանական սահմանն էր, եւ փաստօրէն ունէր կարեւոր ռազմավարական նշանակութիւն: Ներկայումս այդ տեղանքն համընկնում է Գուգարաց լեռների հիւսիսային ծայրակէտի հետ, որն ալիքաձեւ ձգւում է հիւսիսից-հարաւ՝ համարեա զուգահեռ Դեբէդին:*

Այժմ կանգ առնենք Հնարակերտի հիմնախնդրին: Երեմեանը վերջինիս կապակցութեամբ գրում է. «..կոչուել է նաեւ Խանցիխէ, որ չի աւանդուած: Խանցիխէ առաջացել է Խան գետի անունից, որ պահպանել է Ստրաբոնը՝ Χάνης, հաւանաբար յետագայ Քցիա (Խրամ), որի գետաբերանի մօտ այժմեան Ղզլարի եւ «Կոտրած կամրջի» մօտ՝ գտնւում էր յիշեալ ամրոցը: Հնարակերտը գտնւում էր Մեծ Հայքի, Վիրքի եւ Աղուանքի սահմանների հատման կէտում»[18]: *Սակայն Լէոնտի Մրովելին իր մի վկայութեան մէջ դրանք, այսինքն՝ Հնարակերտն ու Խունանը ներկայացնում է որպէս բոլորովին տարբեր բնակավայրեր: Նա գրում է.* «Եւ Միհրանը (Միրիանը) տուեց (իր ազգական) Պերոզին իր դուստրն ի կնութեան: Նաեւ շնորհեց երկիրը Խունանից սկսած մինչեւ Պարտաւ (Բարդաւ), Կուրի երկու կողմը՝ իշխան նշանակելով նրան այնտեղ եւ զօրք բերելով պարսից երկրից սկսեց կռուել Տրդատի դէմ»[19]: *Հեղինակի խօսքն այստեղ Տրդատ Ա.ի օրօք կատարուած դէպքերի մասին է, որտեղ նենգափոխուած են իրադարձութիւնները: Վիրքում այդ ժամանակ իշխում էր Փարասման Ա.ի որդին՝ Միհրդատ Բ.ը (Ազորկը կամ Արզամէլը, 60-75ին), իսկ դաշնակից Պարթեւաստանում՝ Վաղարշը, որը այս վկայութեան մէջ անուանուած է Պերոզ: Կանգ չառնելով այս վկայութեան հաւաստիութեան վրայ, փորձենք այն լուսաբանել պատմա-աշխարհագրական տեսանկիւնից: Պատմիչը այստեղ շեշտում է երկու հանգամանք. ա՝ Խունանից մինչեւ Պարտաւ ընկած տարածքը, բ՝ Կուրի երկու կողմերում իշխելու հանգամանքը: Նա փաստօրէն նշում է տրուած տարածքի հիւսիսային եւ հարաւային ծայրակէտերը, որոնցից առաջինը համապատասխանում է Խունանին,*

իսկ երկրորդը՝ Պարտաւին։ Կուրի հիւսիսային կողմը եղել եւ մնում է նրա ձախակողմեան ափը։ Ինչ վերաբերում է Հնարակերտին, ապա այն մշտապէս գտնուել է նրա աջ ափին՝ Մեծ Հայքի տարածքում։ Փաստօրէն պէտք է եզրակացնել, որ Խունանը եղել է Մեծ Հայքից դուրս, Կուրի ձախ ափին, Վիրքի տարածքում։ Այս տեսակէտն իր իրաւացի արտացոլումն է գտել Վրաստանի Պատմութիւն բազմահատորեակի երկրորդ հատորում, բայց վերջինիս հեղինակները ընկել են ծայրայեղութեան մէջ՝ «սեփականացնելով» մի շարք հայկական տարածքներ։ Հեղինակը, նշելով որ, հարեւան Հայաստանը բաժանուած է եղել սատրատեգիաների, այնուհետեւ եզրակացնում է, որ նոյնպիսի բաժանումներ պէտք է ունենար նաեւ Վիրքը, երբ այստեղ կառավարում էր Փառնաւազը[20]*։ Դրանք Վիրքում եղել են թուով 9ը եւ կոչուել են խեւի, որը նշանակում է կիրճ։ Ոչինչ չունենալով այս կարծիքի դէմ, մենք հարկադրուած ենք առարկել այն մտքին, թէ հարաւում մինչեւ ուր են հասել Վիրքի սահմանները։ Հեղինակը երրորդ խեւի կազմում, որը կոչուել է Գարդաբանի, ընդգրկում է Դեբէդից մինչեւ Տփղիս ընկած տարածքները, որի կենտրոնն է հանդիսացել Խունանը*[21]*։ Այս խնդրին մենք նպատակ չունենք անդրադառնալ կրկին, քանզի վերեւում նշեցինք, որ հայ-վրացական սահմանն այդ հատուածում անցնում էր Վիրահայոց լեռներով եւ Ալգետով, ուստի եւ ամէն ինչ պարզ է եւ հասկանալի։ Փաստօրէն Գարդաբանի խեւի կենտրոն Խունանը պէտք է փնտռել Վիրքի տարածքում, Ալգետից եւ Վիրահայոց լեռներից հիւսիս եւ այն ոչ մի կապ չի ունեցել Հնարակերտի հետ։ Ինչ վերաբերում է Երեմեանին, ապա նրան միանշանակօրէն չփոթութեան մէջ է գցել Մրովելու վկայութեան այսպիսի ծայրայեղ հակասականութիւնը։*

Քանի որ մենք խօսեցինք Հայաստանի հիւսիսային հարեւանի կողմից արդէն այն ժամանակ Մեծ Հայքի հանդէպ տածած տարածքային յաւակնութիւնների մասին, որը առկայ է նաեւ մեր օրերում, ապա նշենք, թէ ուրիշ ինչ բուն հայկական տարածքներ են մատնանշւում, որոնք իբր վրացական են։ Ըստ Գէորգի Ա. Մելիքիշվիլու, չորրորդ խեւին ընդգրկել է Տաշիրը եւ Աբոցը (հայկ. *Աչոցքը*), *հինգերորդը՝ Ջաւախեթին* (*Ջաւախքը*) *եւ Արտաւանը, իսկ եօթերորդի մէջ են ընդգրկում Կլարջէթը կամ Կղարջքը։*[22]

Հայ-վրացական սահմանի՝ Կուրով անցնելու մասին, Մեծ Հայքի Թագաւորութեան հիւսիս-արեւելեան սահմանագլխին, ուշադրաւ մի վկայութիւն ունի նաեւ Խորենացին։ Նա գրում է. «Յետ սորա մեծ եւ անուանի եւ բազմաբիւր զարեւելից հիւսիսոյ կողմանն կարգէ կողմնակալութիւն՝ զայր անուանի եւ յամենայն գործ մտաւորութեան եւ հանճարոյ առաջին, զԱռան, առ մեծ գետովն, որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր։ Բայց զայս գիտեա՛, զի զգեղս զայն մեծ եւ անուանի մոռացումն եղեւ մեզ յառաջումն մատենին յիշատակել, զգունդն որ ի Սիսակայ, որ ժառանգեաց զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ, մինչեւ ցամուրն, որ ասի Հնարակերտ...»*[23]*։ Միայն Հնարակերտից յետոյ է, որ դէպի արեւմուտք ընկած սահմանն այլեւս չի անցել Կուրով եւ հիմնականում համապատասխանել է տեղանքի լեռնագրութեանը։ Խորենացու*

այս վկայութիւնը տեղիք է տալիս նաեւ այլ ենթադրութիւնների, որոնց կողքով աննկատ անցնելն անհնարին է։ Խնդիրը վերաբերում է ոչ միայն Մեծ Հայքի պետական սահմանին՝ այս տարածաշրջանում, այլեւ նրա ներքին վարչա-տարածքային բաժանումների բնագաւառում կատարուած փոփոխութիւններին։ Խորենացու վկայութիւնը ուշագրաւ է այն առումով, որ Սիսակը որոշ ժամանակ ղեկավարել է նաեւ Սիւնիքից դուրս գտնուած տարածքներում, եւ նրա ենթակայութեան ներքոյ է եղել Աղուանից դաշտը, այսինքն՝ Կուրի աջակողմեան ափը։ Այս դաշտը տարածուել է Ուտիք եւ Փայտակարան նահանգների տարածքում։ Բնականաբար, պարզ է, որ խօսք չի կարող լինել Փայտակարանի եւ Ուտիքի՝ Սիւնիքի կազմում գտնուելու վերաբերեալ[24]*։ Խորենացու վկայութիւնը Առանի վերաբերեալ ամբողջացնում է Մովսէս Կաղանկատուացին, երբ ներկայացնում է նրա տոհմածառը*[25]*։ Սիւնիքի մասին յիշատակում է նաեւ Ստրաբոնը։ Զնայած՝ նրա վկայութիւնը ինչ որ տեղ հեղհեղուկ է՝ այդ նահանգի սահմանային խնդիրները վերլուծելու տեսանկիւնից, բայց Ստրաբոնը գոնէ յստակօրէն գծագրում է այս նահանգի հիւսիս-արեւելեան եւ հարաւային սահմանները, նշելով թէ ո՛ր վարչա-տարածքային շրջաններով է այն եղել շրջապատուած։ Ստրաբոնը վկայում է.* «Հայաստանի գաւառներից են նաեւ Փաւենենէն եւ Օրքիստենէն, որ հայթայթում է մեծաքանակ պատերազմական ձի»,[26] *որոնց էլ սահմանակից էր Սիւնիքը։*

Այսպիսով, ստացւում է, որ Խորենացու վկայութիւնը Սիւնիքի կապակցութեամբ, վերաբերում է ոչ թէ նրա կազմում գտնուած տարածքների հարցին, այլ ունի ինչ-որ այլ իմաստ։ Հաւանաբար, Սիւնիքի կառավարիչները այդ ժամանակ եղել են հայոց ողջ արեւելեան կողմի տեղապահները, միաժամանակ լինելով նաեւ այդ կողմի ողջ զինական ուժերի հրամանատարը։ Աւելի ուշ դարաշրջանի բառապաշարով ասելու դէպքում նրանք փաստօրէն ունեցել են բդեշխի պաշտօնը։ Այլ բացատրութիւն Խորենացու այդ վկայութեանը, երեւի անհնարին է տալ։

Ինչո՞վ է պայմանաւորուած մեր կողմից այս տարածքի նմանօրինակ մանրագնին քննութիւնը։ Քարտէզներում տարբեր արտացոլումներ է ստացել Գուգարքի այս հատուածում գոյութիւն ունեցած հայ-վրացական սահմանագիծը։ Դա պատճառ է հանդիսացել, որ Գուգարքի տարածքում գաւառների թուաքանակի վերաբերեալ ուսումնասիրողները յայտնեն իրարամերժ կարծիքներ։ Երեմեանն իր ուսումնասիրութեան հիմք համարելով հանդերձ Աշխարհացոյցը, սկզբում գտնում է, որ եղել է 16, *իսկ ապա՝* 15, *իսկ Յակոբեանն ու Բ. Յարութիւնեանը՝* 9*ը, այսինքն՝ այնքան, որքան նշուած է նոյն պատմական փաստաթղթում։ Կացութեան այսպիսի տարբերութիւնների պատճառ է ոչ միայն տարբեր ձեռագրերից օգտուելը, այլեւ* 9*ը՝ դա աւատատիրութեան սկզբնական շրջանում տիրող վարչատարածքային բաժանումների արտացոլումն էր, իսկ* 16*ը կամ* 15*ը՝ նոյն դարաշրջանի զարգացած հանգրուանի արտայայտութիւնը*[27]*։*

Այս բացատրութիւնից անցում կատարենք Գուգարքի սահմանային հիմնահարցին։ Կուրով է անցել նաեւ հայ-վրացական սահմանը Գուգարքի

ծայր-արեւելքում, որտեղ տեղակայուած են եղել երկու գաւառներ՝ Ձորոփորը եւ Կողբոփորը։ Կողբոփորի մօտ Կուրը կտրուկ շրջադարձ է կատարում հիւսիս, որի պատճառով էլ հայ-վրացական սահմանագիծն արդէն անցնում էր Ալգետով, իսկ այնուհետեւ՝ Թռեղքի կամ Թրիալեթի լեռներով։ Համաձայն Երեմեանի Թբիլիսին գտնուել է երկու երկրների սահմանի մօտ, հայկական Պարուար գաւառի հարեւանութեամբ։ Այստեղով ձգւում են Թռեղքի կամ Հայկական լեռները, որոնք սկիզբ են առնում Ալգետից մի փոքր հիւսիս գտնուող Կումիսի լճից եւ փոքր աղեղնաձեւութեամբ ձգւում արեւելքից-արեւմուտք՝ 42°ի զուգահեռականին համընթաց՝ գտնուելով զուգահեռականից հարաւ։ Հատելով 44°ի միջօրէականը այս լեռները հասնում են մինչեւ Կուր, որը համապատասխանում է ներկայիս Ախալցիխէ քաղաքի տեղանքին։ Այն արեւելքից փակում է Փարվանա լիճ տանող ճանապարհը, իսկ արեւմուտքից նոյն ուղղուածութեամբ ձգւում են Սամարի լեռները, որոնք ծայր հիւսիսում միանում են Ջաւախքին՝ ներկայիս Ծալկայի ջրամբարի հարեւանութեամբ։ Այս տարածքի լեռնագրութեան մասին վկայում է նաեւ Պլինիոս Աւագը, գրելով. «Թասիէի (Thasie) եւ Թրիարիէի (Thriarie) տարածքներն հասնում են մինչեւ Պարիադրէսեան լեռները, որից այն կողմ է գտնւում Կողքիսի անապատը...»[28]։ *Պարզ է, որ վերջինս Արեւելեան Պոնտոսի արեւելեան մասն հանդիսացող Պարխարեան լեռներն են, որոնք ձգւում են Լազիստանի լեռներին համարեա զուգահեռ՝ սկսած Ճորոխի միջին հոսանքի շրջանից մինչեւ նրա գետաբերանը, որը գտնւում է Բաթումի քաղաքի մօտ։ Այստեղ վերոյիշեալ անտիկ մատենագրի միակ «թերացումն» այն է, որ նա շրջանցում է Թռեղքի եւ Պարխարեան լեռների միջեւ՝ հարաւ-արեւմուտքից դէպի հիւսիս-արեւելք տարածուող Կղարջքի լեռները, բայց շարունակութիւնում խօսում է նաեւ Մոսքական եւ ներկայիս Աճարա-Իմերեթական լեռների վերաբերեալ[29]։*

Փաստօրէն, ինչպէս տեսնում ենք վերոյիշեալ վերլուծութիւնից, Մանգլեաց Փորից սահմանը ձգուել է դէպի Թռեղք գաւառը, ուր բարձրացել է մի փոքր հիւսիս, հասել Դեկիցիխէ ամրոցի շրջանը, որը եղել է Վիրքի կազմում։ Սահմանն այստեղ ձգուել է Թռեղքի լեռներին համարեա զուգահեռ եւ հասել Քցիա գետի ակունքները ու Տարածղուրի լիճը։ Այստեղից սահման է դարձել Գուգարքի բարձրաւանդակի արեւելեան հատուածը, որտեղ էլ հենց Կուրն առաջին անգամ հատում է Մեծ Հայքի սահմանը եւ անցնում Վիրքի տարածքը։ Հայ-վրացական սահմանագլխի այս հատուածում Կուրին է միանում նաեւ նրա վտակներից Փարաւանան, որն հոսում է մինչ այդ ներկայիս Ախալքալաքի քաղաքի հարեւանութեամբ։ Նոյն տեղում արեւմուտքից հորիզոնական ուղղուածութեամբ Գուգարքին են խաչաձեւում Ուլգարիի լեռները, որոնք այս հատուածում իրարից տարանջատում են Մեծ Հայքն ու Արեւմտա-վրացական պետութիւնը՝ կամ Կողքիսը, որը նաեւ նոյն Կոլխիդան է։ Այս լեռների արեւելեան վերջին հատուածն ամբողջովին գտնւում է արդէն Մեծ Հայքի տարածքում։ Ուլգարիի լեռներն արեւմուտքում հատւում են ուղղահայեաց դիրք ունեցող Արսիանի լեռներին, որոնք սկիզբ առնելով Աջարիս-Ծղալիի ակունքներից, հասնում են մինչեւ Կուրի

ակունքները՝ ունենալով ալիքաձեւ ձգուածութիւն։ Արսիանի եւ Ուլգարիի հատման տեղում է գտնւում 3165մ. բարձրութիւն ունեցող Արսիան լեռը։ Այս անունը չպէտք է շփոթել Տայքի Արսեաց Փոր գաւառի հետ, այն առումով, որ գաւառն այդ անուանումը չի ստացել այդ լեռների անունից։ Արսիանի լեռնագագաթից սահմանն անցել է Շաւշէթի լեռներով, արեւմուտքում ընդգրկելով ամբողջութեամբ ողջ Ճորոխը, մինչեւ այնտեղ, ուր նրան է միանում հիւսիսային (աջակողմեան) վտակ Աջարիս-Ծղալին։ Ի վերջոյ սահմանն անցել է վերոյիշեալ երկու գետերի խառնարանից հարաւ գտնուող Պարխարեան (այժմ Բուրխալ-Դաղ) լեռներով, որոնք կազմում են Արեւելա-Պոնտական լեռների մի մասը, գտնուելով նրա ծայր հիւսիս-արեւելքում[30]։

*

Սահմանն այն երեւոյթն է, որը ինչպէս հասարակութեան՝ ամբողջութեամբ վերցրած, այնպէս էլ առանձին անհատի մտածելակերպում չի ձեւաւորւում կամ առաջանում տարերայնօրէն։ Սահմանի սկզբնաւորման ակունքների վերաբերեալ ուշագրաւ վկայութիւններ կան դեռեւս Ք.ա. Գ.-Ա. հազարամեակում գրուած մի շարք նշանաւոր գրական յուշարձաններում։ Արդէն այդ հին ժամանակներում իւրաքանչիւրը իւրովի էր պատկերացնում իր սահմանները, որն էլ ամրագրում էր իր մտահայեցակարգի մէջ։ Սրա լաւագոյն օրինակ կարող է լինել հին Միջագետքի առաջին բնակիչների՝ շումէրացիների եւ աքադացիների պատկերացումները սահմանի կապակցութեամբ։ Նրանք, իրենց միւսներից տարանջատում էին Եփրատ (Բուռանուն կամ Պուռատու) եւ Տիգրիս (Իդիգնա կամ Իդիգլատ) գետերով։ Այս պատճառով էլ, եթէ Գ. հազարամեակում այստեղ իշխածներից որեւէ մէկին յաջողւում էր նուաճել ողջ Միջագետքը, ապա նա իրեն հռչակում էր որպէս «աշխարհի չորս կողմերի թագաւոր»։ Բայց ոչ բոլոր ժողովուրդներն էին, որ ունէին իրենց միւսներից տարանջատող Եփրատը եւ կամ Տիգրիսը։ Այս պատճառով էլ, ինչպէս իրաւացիօրէն նկատում է Հոմերոսի պոէմների գիտակներից մէկը՝ Եուրի Անդրէեւը՝ «Աւելի յաճախ համայնքներն իրարից անջատուած էին կամ ոչ-մեծ լեռնային հովտով, կամ էլ փոքրիկ կղզիներով, որոնք գտնւում էին Եգէական կամ էլ Հոնիական ծովերում: «Պետական սահմանը», որն անջատում էր մի համայնք-պետութիւնը միւսից, կարող էր լինել նաեւ ծովը, կամ էլ մօտակայ լեռնաթումբը, որը գերիշխող դիրք ունէր պոլիսի եւ նրա շրջակայքի նկատմամբ»[31]:

Մեր կողմից կատարած այսպիսի մանրազնին վերլուծութիւնը պայմանաւորուած է վրաց պատմագրութեան մէջ տիրող նախկին եւ ներկայիս տարածքային յաւակնութիւնները կասեցնելու մտադրութեամբ։ Իսկ այդ յաւակնութիւններն աճում են երկրաչափական պրոգրէսին համընթաց՝ օրէցօր ձեռք բերելով նոր երանգներ, որը գնալով նմանւում է տարերային աղէտին։ Խօսքն յատկապէս վերաբերում է Ուրուագծեր Վրաստանի Պատմութեան բազմահատորեակի առաջին եւ երկրորդ հատորներում տեղ գտած տեսակէտերին, ուր խօսւում է, թէ ինչպիսի տարածք, ի՞նչ պատմա-

աշխարհագրական սահմաններ են գծագրել վրացական պետութիւնները, ինչպէս մինչեւ Արտաշէս Ա.ը եւ նրանից յետոյ, այնպէս էլ նրա գահակալութեան տարիներին։ Մասնաւորապէս վերոյիշեալ աշխատութեան երկրորդ հատորում Դ. Լ. Մուսխելիշվիլին գրում է. «Ըստ «Աշխարհացոյց»-ի Գուգարքն ընդգրկել է համարեա ողջ հարաւային Վրաստանը: Սակայն Ստրաբոնն այն կանխորոշում է մի տարածք, որը տարածւում է Կուրից հարաւ-արեւելք: Սա լիովին համընկնում է այն տեղադրութեանը, որը ներկայացնում է Մովսէս Խորենացին»[32]: *Այստեղ կարելի է դնել անթիւ հարցական նշաններ, քանզի չկան նոյնիսկ յղումներ յիշատակուածի կապակցութեամբ։ Իր յետագայ շարադրանքում խոստովանելով հանդերձ, որ ըստ հին եւ միջնադարեան հայ մատենագիրների Գուգարքը հանդիսացել է հայկական տարածք, եղել է նոյնիսկ բդեշխութիւն, այսինքն՝ աւելի առաջնակարգ դեր եւ դիրք է ունեցել, քան միւս նահանգները, այսուհանդերձ եզրակացնում է, որ Խորենացին, Փաւստոսը եւ ապա Յովհաննէս Դրասխանակերտցին այն ներկայացնում են որպէս վրացական տարածք։ Մուսխելիշվիլին յօրինում է մի նոր անյայտ ցեղի՝ գուգարացիների կամ գոգարացիների գոյութեան առասպելը, իսկ Գուգարք անուան վերափոխուած կամ կերպարանափոխուած տարբերակ է համարում Փամբակ (կամ էլ Բամբակի) անուանումը*[33]*։ Եթէ այսպիսի հիմնաւորումներով առաջնորդուի իւրաքանչիւրը, ապա կը կարողանայ «սեփականել» ոչ միայն իր անմիջական հարեւանի, այլեւ երկրագնդի ցանկացած ծայրամասում գտնուած իւրաքանչիւրի տարածքը՝ նմանութիւններ գտնելով իր բառապաշարի եւ միւսի որեւէ տեղանուան միջեւ։ Եւ վերջապէս, վերոյիշեալ մատենագիրների մօտ չկայ եւ ոչ մի վկայութիւն, որ գուգարացիների «ցեղը» ունեցել է վրացական ծագում եւ իսպառ կապ չունի հայերի հետ։*

Հայ-վրացական տարածքա-սահմանային խնդիրները նոյն ոգով են քննարկուած նաեւ վերոյիշեալ աշխատութեան առաջին հատորում։ Այստեղ նշւում է, որ Արտաշէս Ա.ի կողմից հիւսիսային հայկական տարածքների՝ Խորձեանի, Գուգարքի եւ Պարիադրէսի լեռնալանջերի վերամիաւորումը հետեւանք էր «ուժային քաղաքականութեան», որի արդիւնքում էլ Քարթլին կամ Իբերիան զրկուել է իր օրինական տարածքներից։ Այս ամէնի կենսագործման մէջ բնականաբար, մեղադրւում է Արտաշէս Ա.ը[34]*։ Վերեւում մենք արդէն տեսանք, որ Գուգարքի կապակցութեամբ նրանք յատկապէս վկայակոչում են Խորենացուն, որը այս մասին պարզ եւ յստակ նշում է.* «Իսկ Գուշարայ, որ յորդւոցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, եւ զկէս մասինն Ջաւախաց, զԿողբ, զԾոբ, զՁոր, մինչեւ ցամուրն Հնարակերտ: Բայց զտէրութիւնն Աշոցայ, եւ զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Հայկազնոյ: Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզօր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բդեաշխն Գուգարացւոց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի, զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացւոց ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիդենոս պատմէ այսպէս ասելով.

«Մեծազօրն Նաբուգոդոնոսոր, որ ուժգնագոյն էր քան զՀերակլէս, ի Լիբիացւոց եւ ի Վերիացւոց աշխարհն զօրաժողով լեալ հասանէր եւ վանեալ վկանդեալ ընդ ձեռամբ նուաճէր, եւ զմասն մի ի նոցանէ յառաջակողմն Պոնտոս ծովու տարեալ բնակեցուցանէր: Եւ ի Վերիայն յեզր երկրի յարեւմուտս: Իսկ ի հովտին մեծի Բասենոյ կարգէ նահապետութիւն զՈրդունին անուանեալ, որ ի զաւակացն Հայկայ...»[35]: *Այս ամէնին պէտք է յաւելել, որ Խորենացին Գուշարի մասին յիշատակում է նշուածից զատ եւս երկու անգամ: Առաջին հայեացքից կարող է թուալ, թէ դրանք ոչինչ չեն կարող տալ, բայց այս վկայութիւններն արժէւորւում են այն առումով, որ նմանւում են տոհմաբանութեան կամ տոհմածառի: Դրանցում որպէս հայոց նախահայրերից մէկը հանդէս է գալիս Գուշարը, որի կողքին է Շարան, եւ Խորենացին տալիս է նաեւ, թէ ինչո՞վ էին նրանք զբաղւում, ինչպիսի՞ տարածք ունէին եւն.: Իսկ այն գտնուել է ծովեզերքի մօտ, ինչպէս շատ յաճախ կոչուել է Սեւանայ լիճը, Մեծամօրի ակունքներից վերեւ ու հասել է մինչեւ Երասխ կամ Արաքս, որն էլ փաստօրէն ի սկզբանէ սահմանագիծ էր հայերի եւ վրացիների միջեւ:*

Իր յաջորդ վկայութիւնում Խորենացին Աշոցքի իշխանատոհմը սերուած է համարում հենց Գուշարից, այսինքն՝ նրանց համարում է այս տեղանքի առաջինի զարմիկները[36]*: Խորենացու վկայութիւնների ուշագրաւութիւնը միայն այսքանով չէ, որ սահմանափակւում է: Նա նաեւ համարեա ամբողջութեամբ մատնանշում է այն տարածքները, որոնք գտնուել են Գուգարք աշխարհի վարչական սահմաններում.* «..ընդգրկելով իր մէջ ոչ թէ Ջաւախքն ամբողջութեամբ, այլ նրա կէս մասը, այսինքն՝ «Աշխարհացոյց»ի Վերին Ջաւախքը, Կանգարքը, Կողբը, Ծորը, Ձորը եւ միւս գաւառները, մինչեւ Հնարակերտ ամրոցը»[37]: *Բոլորովին այլ հարց է, թէ որքան գաւառներ են եղել Գուգարքի կազմում: Աշխարհացոյցում հեղինակը նշում է* 9*ը, բայց, ինչպէս տեսանք վերեւում, Երեմեանը այդ թիւը հասցնում է* 16*ի, իսկ ապա՝* 15*ի: Բ. Ցարութիւնեանը քննութեան ենթարկելով այս կնճռոտ խնդիրը, յանգել է հետեւեալ երկու եզրայանգումներին ա) Գուգարքը որպէս Մեծ Հայքի Թագաւորութեան սովորական վարչատարածքային միաւոր, այսինքն՝ ստրատեգիա, միացուած է եղել Կղարջքին, բ) Քրիստոսից առաջ Բ. դարում ձեւաւորուել է որպէս առանձին վարչատարածքային շրջան, յետագայում վերածուելով բդեշխութեան եւ սկզբնական շրջանում, հաւանաբար Արտաշէս Ա.ի օրօք, բաղկացած է եղել* 7 *հետեւեալ գաւառներից՝ Ձորոփոր, Կողբոփոր, Ծոբոփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք եւ Վերին Ջաւախք: Թէ յետագայում ինչպիսի վարչատարածքային փոփոխութիւններ են տեղի ունեցել Գուգարքի ներսում, դա դուրս է մեր հետաքրքրութիւնների շրջանակներից, քանզի, ինչպէս նշեցինք վերեւում, այդ տրոհումներն տեղի են ունեցել աւելի ուշ շրջանում: Ի վերջոյ Երեմեանը գաւառների վերջնական թուաքանակ համարում է* 15*ը, որը մեր կարծիքով առաւել ճիշտ է եւ համապատասխանում է պատմական իրականութեանն ու սկզբնաղբիւրների տեղեկութիւններին, իսկ Բ. Ցարութիւնեանը՝ անհիմն կանգ է առնում* 13*ի վրայ*[38]*:*

Այս հարցի քննարկումն աւարտենք բուն վրացական աղբիւրների վկայութիւնների վերլուծութեամբ, որը կ՝ապացուցի, թէ որտեղ են սխալւում Վրաստանի Պատմութիւնի հեղինակները։ ԺԱ. դարի վրաց պատմիչ Լէոնտի Մրովելին, որի մասին արդէն նշել ենք վերեւում, իր Վրաց Թագաւորների եւ Նախահայրերի Ու Տոհմերի Պատմութիւնը արժէքաւոր աշխատութիւնում, մեծ տեղ է յատկացրել ինչպէս վրացահայկական յարաբերութիւններին, այնպէս էլ այս երկու երկրների միջեւ գոյութիւն ունեցած սահմանային խնդիրներին։ Իր այս երկասիրութեան արդէն «Թորգոմեանք» կոչուած գլխում նա գրում է. «Բայց Հայկը (Հայոսը) ժառանգեց իր հօրը՝ Թորգոմին (Թարգամոսին) պատկանող երկիրը, եւ տիրեց [սահմանակից] երկ[իրնե]րին. հիւսիսից՝ ինչպէս մատնանշել ենք, հարաւից՝ Որեթ (sic) լեռամբ, արեւելքից՝ մինչեւ ծովն Գուրգանի, արեւմուտքից՝ մինչեւ ծովն Պոնտոսի...»[39]: *Այստեղ, եթէ կայ անորոշութիւն, ապա՝ միայն հիւսիսի կապակցութեամբ, բայց թերթելով նրա տարբեր մասերն ու ծանօթանալով մատենագիրների վկայութիւններին, բազմիցս հանդիպում ենք միեւնոյն կարծիքին, որ Մեծ Հայքի եւ Վիրքի սահմանը մշտապէս անցել է Կուրով, որն էլ մենք քայլ առ քայլ ապացուցեցինք մեր այս շարադրանքի ընթացքում*[40]:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] *Հայնրիխ Հիւբշման, Հին Հայոց Տեղւոյ Անունները, թարգ. Հայր Բ. Պիլեզիկճեան, Վիեննա*, 1907, *էջ* 18, 20-22, 106-112, 115-118, 204. *նաեւ՝ Եղէգի Մարկուարտ, Հայ Բդեաշխք, Վիեննա*, 1903, *էջ* 13 *եւն. նաեւ՝ Հայր Ղուկաս Ինճիճեան, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց. «Մեծ Հայք»*, *Վենետիկ*, 1822, *էջ* 317-375. *նաեւ՝ Հայր Ղեւոնդ Ալիշան, Հայապատում. Պատմիչք Եւ Պատմութիւնք Հայոց*, *Վենետիկ*, 1901, *Բ. մաս՝ Պատմութիւնք Հայոց*, *էջ* 32, 66, 132, 184, 223, 241 *եւն. նաեւ՝ Նիկողայոս Ադոնց, Հայաստանը Յուստինիանոսի Դարաշրջանում. Քաղաքական Կացութիւնը Ըստ Նախարարական Կարգերի*, *թարգ.՝ Ա.Թ. Խոնդկարեան, Է. Հ. Խոնդկարեան, Երեւան, Հայաստան Հրատ.*, 1987, *էջ* 36, 52, 252 *եւն. նաեւ՝ Յակոբ Մանանդեան, Երկեր, Հատ. Ա., Քննական Տեսութիւն Հայ Ժողովրդի Պատմութեան. Սկզբից Մինչեւ Արշակունիների Հաստատումը Հայաստանում (66թ. մ.թ.)*, *Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.*, 1977, *Հատ. Բ., մ.թ. 66-428թթ.*, *Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.*, 1978. *նաեւ՝ Սուրէն Տ. Երեմեան, Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII Դարի Հայկական Քարտէզի Վերակազմութեան Ժամանակակից Քարտէզագրական Հիմքի Վրայ)*, *Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ.*, 1963, *էջ* 40, 45, 48, 59, 65 *եւն. նաեւ՝ Թադէոս Յակոբեան, Հայաստանի Պատմական Աշխարհագրութիւն, Երեւան, Միտք Հրատ.*, 1968, *էջ* 57, 69, 72, 86, 90 *եւն.. նաեւ՝* R.H. Hewsen, "Introduction to Armenian Historical Geography II: The Boundaries of Achaemenid Armina," *Revue des Études Arménniennes, T. XVII,* Paris, 1983, *էջ* 134-137. *նոյնի՝* "Introduction to Armenian Historical Geography IV: The Boundaries of Artaxiad Armenia," *Revue des Études Arménniennes, t. XIX*, Paris, 1985, *էջ* 64*եւն.. նոյնի՝* "Introduction to Armenian Historical Geography IV: The *Vitaxates* of Arsacid Armenia. A Reexamination of the Territorial Aspects of the Institution (part one)," *Revue des Études Arménniennes, t. XXI,* Paris, 1989, *էջ* 271*եւն.*։

[2] Մանրամասն տե՛ս՝ Լ. Մելիքսէթ-Բէկ, Վրաց Աղբիւրները Հայաստանի Եւ Հայերի Մասին, Հտր. Ա, /Ե-ԺԲ դար/, Երեւան, Մելքոնեան Ֆոնդ, ՀԽՍՀ Լուսժողկոմատ Հրատ. 1934, էջ 158, 160, 162. Նաեւ՝ Strabo, *The Geography of Strabo*, London, Oxford University Press, 1960, v. 6, XI, 14,5. Նաեւ՝ Մանանդեան, *Երկեր, Հտր. Ա.*, էջ 135 եւն.: Այս պատերազմի ստոյգ թուականը անյայտ է, բայց գտնում են, որ տեղի է ունեցել Արտաշէսի գահակալութեան սկզբնական շրջանում (Նիկողայոս Ադոնց, *Երկեր. Քննական Պատմութիւն Հայոց, Հտր. Դ.*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2009, էջ 445-456):

[3] Տե՛ս՝ Երեմեան, *Հայաստանը Ըստ*, էջ 117: Ըստ նրա այդ գաւառն զբաղեցրել է 1620 կմ.[2] տարածք. Նաեւ՝ Յակոբեան, էջ 251. Նաեւ՝ Բաբկէն Յ. Յարութիւնեան, *Հայաստանի Պատմութեան Ատլաս, Ա. Մաս*, Երեւան, Մակմիլիան Արմենիա Հրատ., 2004, էջ 42-43. Նաեւ՝ *«Հայաստանը Ըստ «Աշխարհացոյց»ի Քարտէզը* (Թ 3). Նաեւ՝ *R. H. Hewsen, The Geography of Ananias of Širak (Aškaracoys). The Long and Short Recensions*, Wiesbaden, Publiė Avec Le Concoures Հրատ., 1999, passim:

[4] Ողիւմպ քրմի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Գագիկ Խ. Սարգսեան, *Հելլենիստական Դարաշրջանի Հայաստանը Եւ Մովսէս Խորենացին*, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1966, էջ 139եւն.:

[5] Տե՛ս՝ Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, քնն. բնագիրը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրաց. Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, Հայկական ԽՍՀ ԳԱ Հրատ., 1991, Գ, խե.:

[6] Տե՛ս՝ Փաւստոսի Բուզանդացւոյ *Պատմութիւն Հայոց*, ի լոյս ած Ք. Ժ. Ս. Պետերբուրգ, Կայսերական ԳԱ Հրատ., 1883, Գ,ժա, Դ,իդ:

[7] Տե՛ս՝ Սարգսեան, էջ 142, 144, 152 եւ յատկապէս էջ 239:

[8] Երեմեան, *Հայաստանը Ըստ*, էջ 88:

[9] *Strabo*, XI,XIV,4, տես նաեւ՝ II,I,14, XI,VIII,4:

[10] Երեմեան, *Հայաստանը Ըստ քարտէզը*:

[11] Տե՛ս՝ N.V. Arutunian, *Toponimika Urartu* (Ուրարտուի տեղանունների ցանկը), Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 76-77. Նաեւ՝ R. H. Hewsen, “Introduction to Armenian Historical Geography”, *Revue des Études Arméniennes, nouvelle série, T. XIII*, Paris 1978-1979, էջ 77-82:

[12] Մանրամասն տե՛ս՝ Յարութիւնեան, *Հայաստանի Պատմութեան Ատլաս*, էջ 14-15. Նաեւ՝ Arutunian, *Toponimika*, էջ 13, 47, 49, 262-263:

[13] Տե՛ս՝ Arutunian, *Toponimika* աշխատութեան ներդիր քարտէզը *Skhematicheskaya Karta Urartu I Sopredelnikh Stran* (Ուրարտուի եւ սահմանակից եկրների ուրուագծային քարտէզ). Նաեւ նոյնի՝ *Korpus Urtartskikh Klinoobraznikh Nadpisey* (Ուրարտական սեպագիր արձանագրութիւնների ժողովածու) աշխատութեան “Biyayinili-Urartu” Skhematicheskaya Karta (Բիայնիլի-Ուրարտու ուրուագծային քարտէզ) ներդիր քարտէզը, Երեւան, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն Հրատ., 2001:

[14] Տե՛ս՝ *Հայաստանը Ըստի ներդիր քարտէզը եւ Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հտր. IIի* ներդիր քարտէզը, Երեւան, հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984. Նաեւ՝ R. H. Hewsen, “Introduction to Armenian Historical Geography II: The Boundaries of Achaemenid Armenia”, *Revue des Études Arméniennes, nouvelle série, T. XVI,* Paris, 1983, էջ 129-137. Նոյնի՝ “Introduction to Armenian Historical Geography III: The Boundaries of Orontid Armenia”, *Revue des Études Arméniennes, nouvelle série, T. XVIII*, Paris, 1984, էջ 353-357:

[15] Փաւստոս, Ե,ժե:

[16] Տե՛ս՝ *Հայ Ժողովրդի Պատմութիւն, Հտր. IIի* ներդիր քարտէզը՝ «Մեծ Հայքը ըստ «Աշխարհացոյց»ի:

[17] *Տե՛ս՝ Յ. Մանանդեան*, "Srednevokovie Itinerarii V Armianskoi Rukopisi X Stoletia" (*Միջնադարեան չափագրութիւնը Ժ. դարի հայ ձեռագիր մատեաններում*), *Երկեր, Հտր. Ե.*, *Երեւան*, *Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.*, 1984, *էջ* 72. *նաեւ նոյնի՝* "O Torgovle I Gorodakh Armenii V Svyazi S Mirovoy Torgovlei Drevnikh Vremen" (*Հին ժամանակների առեւտրի հետ կապուած Հայաստանի առեւտրի եւ քաղաքների մասին*), *Երկեր, Հտր. Զ.*, *Երեւան*, *Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ.*, 1985, *էջ* 182. *նաեւ Բ. Յարութիւնեան*, *Հայաստանի Պատմութեան Աղբաս*, *էջ* 40-41։

[18] *Երեմեան*, *Հայաստանը*, *էջ* 63. *նաեւ՝ էջ* 55։

[19] *Մելիքսէթ-Բէկ*, *էջ* 166-167։

[20] *Ocherki Istorii Gruzii, T. II, Gruzia V. IV-X Vekakh,* (*Վրաստանի պատմութեան ուրուագծեր*, *Հտր.* 2, *Վրաստանը* IV-X *դարերում*), *խմբ. Մ. Լորդկիպանիձէ*, *Դ. Մուսխելիշվիլի*, *Թբիլիսի*, *Մեցնիերեբա Հրատ.*, 1988, *էջ* 382 *եւն.*։

[21] *Տե՛ս՝ Ocherki Istorii Gruzii, T. I, Gruzia S Drevneishikh Vremen Do IV V. N.E.* (*Վրաստանի պատմութեան ուրուագծեր*, *Հտր.* 1, *Վրաստանը հին ժամանակաշրջանից մինչեւ Ք.ե. Դ. դարը*), *խմբ. Գ. Մելիքիշվիլի եւ Օ. Լորդկիպանիձէ*, *Թբիլիսի*, *Մեցնիերեբա Հրատ.*, 1989, *էջ* 382։ *Համեմատութեան համար տե՛ս՝* Hewsen, "Introduction to Armenian Historical Geography IV", *էջ* 58-60։

[22] *Մանրամասն տե՛ս նոյն՝ էջ* 382. *նաեւ՝ Istoriya Gruzii, T. I, S Drevneishikh Vremen Do 60-kh Godov XIX Veka* (*Վրաստանի պատմութիւն*, *Հտր.* 1, *հին ժամանակներից մինչեւ ԺԹ. դարի* 60*ականները*), *խմբ. Ն. Ա. Բեձենեշվիլի եւ Վ. Դ. Դոնդուա*, *Թբիլիսի*, 1962, *աշխատութեան ներդիր քարտէզը*։

[23] *Խորենացի*, *Բ.*, *ը.*։

[24] *Բ. Յարութիւնեանը գտնում է, որ Սիւնիքի ձեւաւորումը որպէս նահանգ վերջնականապէս տեղի է ունեցել Տրդատ Ա.ի օրօք, իսկ Աշխարհացոյցեան սահմանները ձեւաւորուել են, հաւանաբար Գ. դարում* (*Բ. Յ. Յարութիւնեան*, «*Մեծ Հայքի Սիւնիք Աշխարհն Ըստ «Աշխարհացոյց»ի* (*Պատմա-Աշխարհագրական Դիտարկումներ*)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 2003, N1, *էջ* 136-141)։

[25] *Տե՛ս՝ Մովսէսի Կաղանկատուացոյ Պատմութիւն Աղուանից Աշխարհի*, *Թիֆլիս*, *Աղանեանի տպարան*, 1912, *Ա*, *դ,զ,ը,ժե*։

[26] *Strabo*, XI,XIV,4։

[27] *Տե՛ս՝ Երեմեան*, *Հայաստանը*, *էջ* 118. *նաեւ՝ Անանիա Շիրակացի*, *Մատենագրութիւն*, *թարգ. Ա. Գ. Աբրահամեանի եւ Գ. Բ. Պետրոսեանի*, *Երեւան*, *Սովետական Գրող*, 1979, *էջ* 297. *նաեւ՝* K. P. Patkanov, *Armyanskaya Geografiya VII Veka Po R.Kh.* (*Է. դարի հայկական աշխարհագրութիւն*, *ըստ Ռ.Խ.ի*) *(Pripisivashayasya Moyseyu Khorenskomu)* (*Մովսէս Խորենացուն վերագրուած*) Tekst I Perevod (*բնագիր եւ թարգ.*), *Սանկտ Պետերբուրգ*, *Կայսերական ԳԱ Հրատ.*, 1877, *էջ* 52։

[28] *Plinii Secundii Naturalis Historiae,* Cambridge-Mass.-London, Oxford University Press, 1957, v. 2, VI,XI, 29. *նաեւ՝ Ա.Մ. Ոսկանեան*, *Հայկական Լեռնաշխարհը եւ Հարեւան Շրջանները քարտէզը*, *Երեւան*, *Երեւանի Պետական Համալսարանի Հրատ.*, 1976։

[29] *Ptolemaios Handbuch der Geographie, Griechisch-Deutch, 2 teil, buch 5-8*, Basel Schwabe Verlag, 2006, VI,XI.29. *նաեւ՝* R.H. Hewsen, "Ptolemy's Chapter on Armenia: An Investigation of his Toponyms," *Revue des Études Arméniennes, nouvelle série, T. XVI,* Paris, 1982, *էջ* 114-115, 117. *նաեւ նոյնի՝* "Introduction to Armenian Historical Geography IV," *էջ* 271-273։

[30] *Տե՛ս՝ Երեմեան*, *Հայաստանի քարտէզը*. *նաեւ՝ Ոսկանեան*, *Հայկական Լեռնաշխարհը քարտէզը*։

[31] *Istoria Drevnego Mira Kn. I, Rannaya Drevnost,* Otv. Red. I. M. Dyakonov (*Հին աշխարհի պատմութիւն*, *գրք* I, *վաղ հնութեան շրջան*, *պատ. խմբագիր՝ Ի. Դիակոնով*),

Մոսկուա, Արեւելեան Գրականութեան Գլխաւոր Խմբ. Հրատ., 1989, *էջ* 340, Izd. Trete (*երրորդ հրատարակութիւն*). *նաեւ՝* *Istoria Drevnei Gretsi*, pod. Red. V.I. Kuzishina (*Հին Յունաստանի պատմութիւն, խմբ.՝ Վ. Կուզինշինա*), *Մոսկուա, Վիսշայա Շկոլա Հրատ.*, 2001, *էջ* 80-83. *նաեւ՝ Հ. Ժ. Յարութիւնեան, «Սահման Հասկացութիւնը եւ Նրա Ռազմապատմական Նշանակութիւնը», Հայկական Բանակ*, 2005, N 1, *էջ* 106-114. *նաեւ նոյնի՝ «Սահմանը Մովսէս Խորենացու Պատմահայեցողութեան Մէջ», Պատմութիւն եւ Կրթութիւն Գիտաաես. Մեթոդ. Հանդէս, Երեւան* 2005, N 1-2, *էջ* 69-78. *նաեւ նոյնի՝* "Ponyati Granitsi V Drevnem Mire (Vostok, Gretsi I Rim)" (*Սահմանների հասկացութիւնը հին աշխարհում - Արեւելք, Յունաստան եւ Հռոմ*), *Իրան-Նամէ, Հտր.* 40, *Երեւան* 2005, *էջ* 67-71։

[32] *Ocherki, T. II, էջ* 389։

[33] *Տե՛ս նոյն՝ էջ* 389-390։ *Այս տեսակէտները հերքուել են նաեւ Դէյվիդ Լենգի կողմից* (D. Lang, *Gruzinei. Khraniteli Svyatini* (*Վրացիներ. սրբավայրեր պահպանողներ*), *Մոսկուա, Յենտրպոլիգրաֆ Հրատ.*, 2004, *էջ* 64 *եւն.*)։ *Հարկ է նշել, որ հեղինակը ոչ միայն իրաւացիօրէն քննարկել է խնդիրը, այլեւ իր հիմնական եզրայանգումներն է կատարում առաջին հերթին յենուելով հնագիտական պեղումների արդիւնքների վրայ։*

[34] *Տե՛ս՝* *Ocherki, T. I, էջ* 272-273։

[35] *Խորենացի, Բ,ը։*

[36] *Նոյն, Բ,գ,հը։*

[37] *Բ. Յ. Յարութիւնեան, «Մեծ Հայքի Գուգարք Աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի», Բանբեր Երեւանի Համալսարանի*, 1977, N2, *էջ* 177։

[38] *Տե՛ս՝ Երեմեան, Հայաստանը, էջ* 119. *նաեւ՝ Բ. Յարութիւնեան, Հայաստանի Պատմութեան Աղբաս, էջ* 42-43. *նաեւ՝ Բ. Յարութիւնեան, «Մեծ Հայքի», էջ* 194 *եւն.*։

[39] *Մելիքսէթ-Բէկ, էջ* 145։

[40] *Տե՛ս՝ նոյն աշխատութեան բազմաթիւ մասերում։*

THE NORTHEN BORDERS OF THE KINGDOM OF GREATER ARMENIA
ACCORDING TO ARMENIAN, GEORGIAN, GREEK AND ROMAN HISTORIANS
(190BC-428AD)
(HISTORICAL-GEOGRAPHICAL STUDY)
(Summary)

A. J. HARUTYUNYAN

The question of the northern borders of the kingdom of Greater Armenia was written about not only by ancient Armenian historians, but also by old Georgian, Greek and Roman authors. These northern boundaries were finally established by Artashes I and remained unchanged until the fall of the Arshakid Kingdom in 428 AD.

Georgian researchers, however, both during and after the Soviet period, have been in disagreement with Armenian historiographers regarding the border line. They have presented counter-arguments for redrawing certain sections of the borderline and consider certain northern regions of historical Armenia as parts of Georgia.

The author refutes the Georgian point of view. Referring to a number of ancient Armenian, Georgian, Greek and Roman historians, he examines the validity of the Georgian position and argues that it is not based on sound data. In addition, he notes that the evidence Georgian historians bring forth does not underpin their views as they distort and misinterpret their historical references.